**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 12.08.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

## թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/88

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ

Բողոք բերող՝ «Գրիգորյան Շին» ՍՊԸ

Գնման Մրցույթի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթ, օդափոխման համակարգերի տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 31.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

- 25.05.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետը,

- ընդունել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու, իսկ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 31.07.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/88 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

06.08.2020թ.-ին և 12.08.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.08.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.08.2020թ.-ին:

2. «**Գրիգորյան Շին**» **ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն 31.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«Բողոքաբերն ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1 ծածկագրով բաց մրցույթին:*

*Գնահատող հանձնաժողովի 25.05.2020թ.-ի N 2 արձանագրության համաձայն՝ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ն չի ներկայացրել հայտի ապահովումը:*

*Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից համապատասխան ծանուցում է ուղարկվել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:*

*Սահմանված ժամկետում «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից նշված անհամապատասխանությունը չի շտկվել:*

*Բողոքաբերը իր կողմից ներկայացված գնային առաջարկի համաձայն, զբաղեցչել է երկրորդ տեղը:*

*Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին և երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցների գնային առաջարկների միջև տարբերությունը*

*կազմում է մոտ 190 000 000 ՀՀ դրամ, հարցի պարզաբանման համար հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն:*

*11.05.2020թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է պատասխան, համաձայն որի բարձրացված հարցը կարգավորվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ և 42-րդ կետերով: Միաժամանակ առաջարկվել է հնարավոր հակամրցակցային համաձայնության ռիսկերը գնահատելու համար քննարկել համապատասխան մարմիններին դիմելու հարցը:*

*Հաշվի առնելով վերոգրյալը, Պատվիրատուն 12.05.2020թ.-ին դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ խնդրելով քննարկման առարկա դարձնել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ խախտման դեպք թե ոչ:*

*ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ստացվել է գրություն այն մասին, որ Հանձնաժողովն իրականացնում է ուսումնասիրություն:*

*Գնահատող հանձնաժողովը 25.05.2020թ.-ի N 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընթացակարգը կասեցնել մինչև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից որոշման ընդունելը:*

*Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 25.05.2020թ.-ի N 2 արձանագրության 7.1 կետը չի բխում ՀՀ գործող օրենսդրության և 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներից:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*

*Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ*

*աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

*Նույն կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:*

*Սույն գործի փաստերի համաձայն՝ ամենացածր գնային առաջարկը ներկայացրել է «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ն, որը սակայն չի ներկայացրել հայտի ապահովումը, որպիսի պայմաններում վերջինիս հայտը ենթակա է մերժման, իսկ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ընտրված մասնակցին պետք է ճանաչեր հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից, այսինքն Բողոքաբերին:*

*Դրան հակառակ Հանձնաժողովը դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ խնդրելով քննարկման առարկա դարձնել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ խախտման դեպք թե ոչ և կասեցրել է գնման ընթացակարգը առանց որևէ իրավական հիմնավորման:*

*ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասին համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:*

*Վերը նշված դրույթներով ամրագրվում է իրավական պետության իշխանության թույլատրելի շրջանակի բովանկադությունն առ այն, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել*

*միայն ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ, հետևաբար՝ այդ լիազորությունները (գործառույթները, իրավունքները և պարտականությունները) կամայական չեն և չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերին, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում վերը նշված մարմիններն ու անձիք իրենց դրսևորվում է օրենքի գերակայությամբ՝ հետևաբար ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին:*

*ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:*

*Տվյալ պարագայում Բողոքաբերը շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բավարարման հասնելու օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթին:»:*

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

- 25.05.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետը,

- ընդունել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու, իսկ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. «**<u>Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**.

Բողոքներ քննող անձը 31.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/11473-2020 գրությամբ դիմել է «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2020թ.-ին ներկայացված

բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 05.08.2020թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀԱՊ) կողմից իրականացվող ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1 ծածկագրով ««Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին ամրացված շենք-շինության օդափոխության համակարգի անցկացման» բաց մրցույթի (այսուհետ Մրցույթ) բացումը տեղի է ունեցել 2020 թվականի ապրիլի 22-ին:*

*Մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը հայտ է ներկայացրել հինգ կազմակերպություն: Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության Պրոֆմոնտ ՍՊԸ-ի հայտում բացակայում էր հայտի ապահովումը:*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը: Հիմք ընդունելով վերոնշյալ կարգի 41-րդ կետը՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, 2020 թվականի ապրիլի 22-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել ծանուցում «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի մեկ աշխատանքային օրում ներկայացնել Հայտի ապահովումը(կցվում է):*

*2020 թվականի ապրիլի 27-ին «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն (կցվում է), որ հաշվի առնելով երկրում հայտարարված արտակարգ դրությունը կազմակերպությունը խնդրում է երկարացնել հայտի ապահովման ներկայացման վերջնաժամկետը:*

*Հիմք ընդունելով այն փաստը, որ առաջին և երկրորդ տեղերի կողմից ներկայացված գնային առաջարկների միջև տարբերությունը կազմում է մոտ մեկ հարյուր իննսուն միլիոն*

*ՀՀ դրամ՝ ՀԼԼՊ-ի կողմից ուղարկվել է հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հարցին պարզաբանում տալու խնդրանքով (կցվում է):*

*2020 թվականի մայիսի 11-ին ՀՀ ՖՆ կողմից ուղարկվել է պատասխան (կցվում է), որից հետո ՀԱՊ-ը դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին (կցվում է)՝ խնդրանքով քննարկել, թե արդյոք «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպք, այո, թե՝ ոչ, և ընդունել համապատասխան որոշում: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ստացվել է գրություն, որ Հանձնաժողովը իրականացնում է ուսումնասիրություն (կցվում է):*

*2020 թվականի մայիսի 25-ին «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի կողմից որոշում է ընդունվել Մրցույթը կասեցնել մինչև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից որոշում ընդունելը:»:*

4. **<u>ԳԲՔԱ-ԼՕ</u>**<u>-2020/88</u> **<u>բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**<u>.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից օդափոխման համակարգերի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 22.04.2020թ.-ի ժամը 13:10-ը ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն և «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

iii. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 310 180 864.95, իսկ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից՝ 494 999 820 ՀՀ դրամ գումարի գնային առաջարկներ:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք

ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 2020 թկականի ապրիլի 22-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ մեկ աշխատանքային օրում հայտի ապահովումը ներկայացնելու համար:

v. 2020 թվականի ապրիլի 27-ին «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել գրություն, որի համաձայն՝ հաշվի առնելով երկրում հայտարարված արտակարգ դրությունը՝ Մասնակիցը խնդրել է երկարացնել հայտի ապահովման ներկայացման վերջնաժամկետը:

vi. Պատվիրատուն, հիմք ընդունելով այն փաստը, որ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկների միջև տարբերությունը կազմում է մոտ մեկ հարյուր իննսուն միլիոն ՀՀ դրամ՝ որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հարցին պարզաբանում տալու խնդրանքով:

vii. 2020 թվականի մայիսի 11-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ուղարկվել է պատասխան, համաձայն որի՝ հարցը կարգավորված է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և 42-րդ կետերով: Իսկ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է, քննարկել հնարավոր հակամարցակցային համաձայնության ռիսկերը գնահատելու համար համապատասխան մարմնին դիմելու հնարավորության հարցը:

viii. Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված գրության պատասխանը, 2020 թվականի մայիսի 12-ին դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ խնդրանքով քննարկման առարկա դարձնելու այն հանգամանքը, արդյո՞ք «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել անտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպք, թե՞ ոչ՝ ընդունելով համապատասխան որոշում:

ix. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ի պատասխան վերոնշյալ գրության, հայտնել է, որ վերջինս իրականացնում է ուսումնասիրություն:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման Մրցույթն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա

հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե արձանագրված անհամապատասխանությունները Մասնակցի կողմից չեն շտկվում, ապա վերջինիս հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնում է լիազորված մարմինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում:

Կարգի 27-րդ կետի համաձայն՝ եթե գնահատող հանձնաժողովը չի ապահովում Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը՝

1) զեկուցագիրը ստանալու օրը՝

ա. հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև երեք աշխատանքային օրով,

բ. հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր,

2) իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունվում է հրաման,

3) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝

ա. հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ,

բ. հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի կողմից օդափոխման համակարգերի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.03.2020թ.-ին հայտարարված «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ն, Հանձնաժողովի 25.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ներկայացվել է 310 180 864.95 ՀՀ դրամի, իսկ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն՝ 494 999 820 ՀՀ դրամի գնային առաջարկներ:

Նույն արձանագրության համաձայն՝ «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի հայտում բացակայել է հայտի ապահովումը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 2020 թկականի ապրիլի 22-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ մեկ աշխատանքային օրում հայտի ապահովումը ներկայացնել համար:

2020 թվականի ապրիլի 27-ին «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել գրություն, որի համաձայն՝ հաշվի առնելով երկրում հայտարարված արտակարգ դրությունը՝ Մասնակիցը խնդրել է երկարացնել հայտի ապահովման ներկայացման վերջնաժամկետը:

Պատվիրատուն, հիմք ընդունելով այն փաստը, որ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկների միջև տարբերությունը կազմում է մոտ մեկ հարյուր իննսուն միլիոն /190 000 000/ ՀՀ դրամ՝ որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հարցին պարզաբանում տալու խնդրանքով:

2020 թվականի մայիսի 11-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ուղարկվել է պատասխան, համաձայն որի՝ հարցը կարգավորված է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և 42-րդ կետերով: Իսկ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է, քննարկել հնարավոր հակամարցակցային համաձայնության ռիսկերը գնահատելու համար համապատասխան մարմնին դիմելու հնարավորության հարցը:

Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված գրության պատասխանը, 2020 թվականի մայիսի 12-ին դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ խնդրանքով քննարկման առարկա դարձնելու այն հանգամանքը, արդյո՞ք «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել անտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպք, թե՞ ոչ՝ ընդունելով համապատասխան որոշում, որին ի պատասխան ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը հայտնել է, որ վերջինս իրականացնում է ուսումնասիրություն:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնում է լիազորված մարմինը, որը պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում:

Տվյալ պարագայում, ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում առաջարկել է Պատվիրատուին քննարկել հնարավոր հակամարցակցային համաձայնության ռիսկերը գնահատելու համար համապատասխան մարմնին դիմելու հնարավորության հարցը:

Պատվիրատուն, հիմք ընդունելով լիազորված մարմնի առաջարկը, 2020 թվականի մայիսի 12-ին դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, ինչով պայմանավորված վերջինս իրականացնում է ուսումնասիրություն:

Վերոնշյալով պայմանավորված, Հանձնաժողովը 25.05.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետով որոշում է կայացրել կասեցնել գնման ընթացակարգը՝ մինչև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից որոշման ընդունումը:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական և փաստական հանգամանքները, դրանց՝ Օրենքի 16-րդ հոդվածի, Կարգի 27-րդ կետի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատունին ուղղված գրության հետ համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի կողմից Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու համար, Պատվիրատուն (պատվիրատուի ղեկավարը) մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի

գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից գնման ընթացակարգը կասեցնելու մասին որոշումը իրավաչափ է, որպիսի պայմաններում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր չեն և ենթակա չեն բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/88 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**